



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ  
БЮЛЛЕТЕНЬ

№ 10 (54)

# ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում  
գետեղված տեղեկությունները  
համարվում են հրապարակված 2008 թվականի հոկտեմբերի 27-ից

## ● ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                  |               |
|--------------------------------------------------------------------------------------------------|---------------|
| ԳՅՈՒՏԵՐ .....                                                                                    | 4, 57         |
| <i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին .....</i>                                             | <i>6, 59</i>  |
| <br>ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ.....                                                                        | 14, 67        |
| <i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին .....</i>                                             | <i>16, 69</i> |
| <br>ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ .....                                                                     | 17            |
| <i>Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ<br/>սպասարկման նշանների մասին .....</i>                | <i>19</i>     |
| <br><i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման<br/>գործողության երկարաձգման մասին .....</i> | <i>49</i>     |
| <br>ՅՈՒՑԻՉՆԵՐ .....                                                                              | 50            |
| <br>ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....                                                                    | 52            |
| <br>ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ .....                                                                          | 70            |

Հրատարակվում է Մտավոր սեփականության  
գործակալության կողմից 1995թ.

0010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3  
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին  
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական  
ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной  
собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3  
Тел. (374 10) 563-258 отдел приема заявок  
Тел. (374 10) 561-126 отдел информационно-  
технологического обеспечения

**Internet: [www.aipa.am](http://www.aipa.am)**  
**E-mail: [armpat@aipa.am](mailto:armpat@aipa.am)**

## СОДЕРЖАНИЕ

|                                                                              |        |
|------------------------------------------------------------------------------|--------|
| ИЗОБРЕТЕНИЯ.....                                                             | 4, 57  |
| Сведения о выданных патентах.....                                            | 6, 59  |
| ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....                                                         | 14, 67 |
| Сведения о выданных патентах.....                                            | 16, 69 |
| ТОВАРНЫЕ ЗНАКИ.....                                                          | 17     |
| Сведения о зарегистрированных<br>товарных знаках и знаках обслуживания ..... | 19     |
| Сведения о продлении действия<br>регистрации товарных знаков.....            | 49     |
| УКАЗАТЕЛИ.....                                                               | 50     |
| СООБЩЕНИЯ.....                                                               | 52     |
| ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....                                                       | 70     |

## CONTENTS

|                                                                     |        |
|---------------------------------------------------------------------|--------|
| INVENTIONS.....                                                     | 4, 57  |
| Information on granted patents.....                                 | 6, 59  |
| UTILITY MODELS.....                                                 | 14, 67 |
| Information on granted patents.....                                 | 16, 69 |
| TRADE MARKS.....                                                    | 17     |
| Information on registered trade<br>marks and service marks .....    | 19     |
| Information on renewal of effect<br>of trademark registration ..... | 49     |
| INDEXES.....                                                        | 50     |
| REPORTS.....                                                        | 52     |
| TWO-LETTER CODES.....                                               | 70     |

*q3ntstr*

**Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների  
նույնականացման միջազգային կոդերը  
ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

|    |                                                                                                                                                                  |
|----|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 11 | արտոնագրի համարը                                                                                                                                                 |
| 13 | փաստաթղթի տեսակի կոդը<br>A1 Գյուտի հիմնական արտոնագիր<br>A2 Գյուտի նախնական արտոնագիր<br>B2 Նախնական արտոնագրով նախկինում պահպանված գյուտի<br>հիմնական արտոնագիր |
| 21 | հայտի համարը                                                                                                                                                     |
| 22 | հայտի ներկայացման թվականը                                                                                                                                        |
| 23 | լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն                                                                                                         |
| 24 | արտոնագրով վերապահված իրավունքների գործողության սկիզբը                                                                                                           |
| 31 | առաջին հայտի համարը                                                                                                                                              |
| 32 | առաջին հայտի ներկայացման թվականը                                                                                                                                 |
| 33 | երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը                                                                                                                     |
| 42 | հայտը համընդհանուր ծանոթացման դնելու թվականը                                                                                                                     |
| 44 | գյուտի նախնական արտոնագրի մասին տեղեկությունների<br>հրապարակման թվականը                                                                                          |
| 45 | գյուտի հիմնական արտոնագրի մասին տեղեկությունների<br>հրապարակման թվականը                                                                                          |
| 51 | միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)                                                                                                          |
| 54 | գյուտի անվանումը                                                                                                                                                 |
| 56 | տեղեկատվության աղբյուրներ                                                                                                                                        |
| 57 | գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը                                                                                                                      |
| 62 | ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ներկայացման թվականը,<br>որից զատված է տվյալ հայտը                                                                          |
| 65 | հայտին վերաբերող ավելի վաղ հրապարակված արտոնագրային<br>փաստաթղթի համարը                                                                                          |
| 71 | հայտատուն, երկրի կոդը                                                                                                                                            |
| 72 | գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը                                                                                                                               |
| 73 | արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը                                                                                                                                |
| 74 | արտոնագրային հավատարմատար                                                                                                                                        |
| 85 | միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը                                                                                                            |
| 86 | միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը                                                                                                             |
| 87 | միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը                                                                                                             |

## Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2006) (11) 2140 (13) A2  
A01B 3/00

(21) AM20080018 (22) 22.02.2008

(42) 04.05.2008

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Շավարշ Մացակի Գրիգորյան (AM), Արամ Արսենի Հովհաննիսյան (AM), Սիմոն Մամբրեի Սիմոնյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) **Քարթառոտ հողերի գուրթան**

(57) Գյուղը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ հողի հիմնական մշակման մեքենաներին: Գուրթանի յուրաքանչյուր իրան համալրված է դաշտում մնացած քարերի տեղանշման սարքով, որն ունի տեղանշող հեղուկ պարունակող բաթ և իրանի պահանգին հողակապորեն ամրակցված լծակային մեխանիզմ, որը միացված է շրջանակի վրա տեղակայված փականին: Փականները մի կողմից հաղորդակցված են բաթին, իսկ մյուս կողմից՝ համապատասխան իրանին կից ծայրապահանգին:

Հավելյով քարին, իրանը բարձրացնում է պահանգը, լծակային մեխանիզմի ազդեցության տակ բացվում է համապատասխան փականը, և բաթից տեղանշող հեղուկը արտահոսում է դեպի ծայրապահանգ, նշելով քարի տեղը՝ դրա հետագա հանման համար: Տեղանշվում են դաշտից դուրս չհանված, սեպացած կամ շրջանցված քարերը, 1 նկ:

(51) (2006) (11) 2141 (13) A2  
A01B 15/00

(21) AM20080039 (22) 03.04.2008

(42) 04.05.2008

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Արամ Արսենի Հովհաննիսյան (AM), Սիմոն Մամբրեի Սիմոնյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) **Գուրթանի իրան**

(57) Գյուղը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ գուրթանի իրաններին:

Իրանն ունի կանգնակ, խոփ, թև և դաշտային տախտակի դեր կատարող հատած կոնի ձև ունեցող հենարանային գլանվակ: Գլանվակն ուղղաձիգ հարթության նկատմամբ տեղադրված է այնպիսի անկյան տակ, որ դաշտի ակոսապատին հարող գլանվակի ծնիչը զուգահեռ լինի այդ մակերևույթին:

Նվազեցվում է գուրթանի քարշային դիմադրությունը, բարձրացվում է ընթացքի կայունությունը, ապահովվում է հողի մշակման բարձր որակը, 2 նկ.:

(51) (2006) (11) 2142 (13) A2  
A01B 15/00

(21) AM20080014 (22) 11.02.2008

(42) 04.05.2008

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Դանիել Պետրոսի Պետրոսյան (AM), Վահան Գևորգի Սարգսյան (AM), Շավարշ Մացակի Գրիգորյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) **Գուրթանի խոփ**

(57) Գյուղը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը: Գուրթանի խոփն ունի սայրի կտրվածքներով առաջացած ատամնաձև կառուցվածք: Ատամների միջև կան թեթ սայրեր, որոնք ուղիղ անկյուն են կազմում հողային մասնիկների շարժման ուղղության հետ, ընդ որում սայրերից մեկն ունի բացվածք:

Պարզեցվում է խոփի կառուցվածքը, իջեցվում է քարշային դիմադրությունը, 2 նկ.:

(51) (2006) (11) 2143 (13) A2  
A01B 63/118

(21) AM20080012 (22) 07.02.2008  
(42) 04.05.2008

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Նորիկ Ավետիսի Բազիկյան (AM), Արամ Արսենի Յովհաննիսյան (AM), Սիմոն Մամբրեի Սիմոնյան (AM), Վարդան Ալեքսանի Վարդանյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) **Գուրթանի աշխատանքային օրգանների ընթացքի խորության համաչափության կարգավորման սարք**

(57) Գյուղը վերաբերում է գյուղատնտեսական մեքենաշինությանը, մասնավորապես՝ հողի հիմնական մշակման մեքենաների կարգավորման սարքերին:

Սարքն ունի երկկողմ գործողության հիդրոգլան, որը մի ծայրով միացված է գուրթանի եռակետ կախովի լծակային մեխանիզմի վերին հողակապին, իսկ մյուս ծայրով հողակապորեն ամրացված է գուրթանի շրջանակին՝ ծանրության կենտրոնում: Հիդրոգլանի խոռոչները բարձր ճնշման խողովակաշարերով հաղորդակցված են պնևմատիկոնոտակիչների և տրակտորի հիդրոհամակարգի հետ:

Ապահովվում է գուրթանի աշխատանքային օրգանների ընթացքի սահմանված խորությունների հավասարաչափություն, մեխանիկական հարվածների և ուղղաձիգ տատանումների սահուն մարումը, 2 նկ.:

(51) (2006) (11) 2144 (13) A2  
A01B 63/118  
G01M 17/00

(21) AM20080013 (22) 07.02.2008  
(42) 04.05.2008

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Նորիկ Ավետիսի Բազիկյան (AM), Արամ Արսենի Յովհաննիսյան (AM), Սիմոն Մամբրեի

Սիմոնյան (AM), Վահան Չարմիկի Մելիքյան (AM), Պարզև Արամայիսի Տոնապետյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) **Տրակտորային ագրեգատների տատանումների մարման սարք**

(57) Սարքն ունի եռակետ կախովի լծակային մեխանիզմ, այն բարձրացնող և իջեցնող սարքավորում, երկկողմանի գործողության երկու հիդրոգլան, որոնք գյուղատնտեսական գործիքը հողակապորեն միակցում են տրակտորին և որոնցից յուրաքանչյուրը հաղորդակցված է երկու պնևմատիկոնոտակիչների հետ: Բարձրացնող և իջեցնող սարքավորումը կազմված է հիդրոգլանից, դրան կապված լայնական լիսեռից, լիսեռին հողակապորեն միակցված երկայնական լծակներից և հողակապորեն միակցված ձգաձողերից: Ձգաձողերի երկրորդ ծայրերը երկկողմանի գործողության հիդրոգլանների միջոցով կապված են եռակետ լծակային մեխանիզմի ստորին կետերին: Լծակային մեխանիզմի իր վերին կետով հողակապորեն միակցված է տրակտորին:

Ընդլայնվում են սարքի ֆունկցիոնալ հնարավորությունները, 2 նկ.:

(51) (2006) (11) 2145 (13) A2  
A01K 67/00

(21) AM20080037 (22) 28.03.2008  
(42) 04.05.2008

(71) Մանվել Վլադիմիրի Բադալյան (AM), Սաթենիկ Աշոտի Խառատյան (AM)

(72) Մանվել Վլադիմիրի Բադալյան (AM), Սաթենիկ Աշոտի Խառատյան (AM)

(73) Մանվել Վլադիմիրի Բադալյան, 0053, Երևան, Արցախի պող. 20, բն. 65 (AM), Սաթենիկ Աշոտի Խառատյան, 0086, Երևան, Շարուրի 26, բն. 13 (AM)

(54) **Արտադրող հնդկահավերի ընտրության եղանակ**

(57) Գյուղը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես՝ հնդկահավաբուծությանը և կարող է կիրառվել տոհմաբուծական և սելեկցիոն աշխատանքներում:

Կենսունակ սերունդ ստանալու համար իրականացնում են արտադրողների ընտրություն:

Ընտրության սկզբնական փուլում կատարում են կուսաժին հնդկահավերի հայտնաբերում ու խոտանում: Հայտնաբերումն իրականացնում են ըստ արյան հեմոգլոբինի և ընդհանուր սպիտակուցի քանակության ցուցանիշների: Ցածր ցուցանիշներով հնդկահավերին խոտանում են: Մնացած հնդկահավերին գնահատում են ըստ տոհմական և մթերատվական որակի և ընտրում արտադրողներին:

Ապահովվում է կուսաժին հնդկահավերի վաղ հայտնաբերումն ու խոտանումը և արտադրողների ընտրության բարձր արդյունավետությունը:

(51) (2006) (11) 2146 (13) A2  
A61B 17/00

(21) AM20080031 (22) 17.03.2008  
(42) 01.04.2008

(71) Աշոտ Գարուշի Թորոսյան (AM)  
(72) Աշոտ Գարուշի Թորոսյան (AM)  
(73) Աշոտ Գարուշի Թորոսյան, 0047, Երևան, Արմենակ Արմենակյանի փող. 1-ին անց. 21 (AM)  
(54) **Զլերի կարման եղանակ**

(57) Գյուղը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ վիրաբուժությանը և կարող է կիրառվել վերջույթների փաստված ջլերը կարելու համար:

Վնասված ջլի կողմնային մակերևույթից վիրաբուժական թելը դուրս հանելուց հետո ձիգ վիճակում հանգուցակապում են: Ճակատային մակերևույթից հանելով դուրս, թելը մտցնում են ջլի երկրորդ ծայրի ճակատային մակերևույթից ներս, 3-5 անգամ անկացնում ջլի միջով մի կողմնային մակերևույթից մյուսը և դուրս հանելով կողմնային մակերևույթից ձգում են՝ մոտեցնելով և հպելով իրար ջլի երկու ծայրերի ճակատային մակերևույթները, ձիգ վիճակում հանգուցակապում են և թելը նորից մտցնելով ջլի երկրորդ ծայրի մեջ, հանում են ճակատային մակերևույթից և թելի երկու ծայրերը կապում են:

Բացառվում է ջլի պատռումը և թելքախախտումը, 3 նկ.:

(51) (2006) (11) 2147 (13) A2  
A61B 17/12

(21) AM20070089 (22) 26.07.2007  
(42) 01.04.2008

(71) Սուրիկ Գրիգորյան (AM), Սուրիկ Հարությունյան (AM), Սարգիս Գրիգորյան (AM)  
(72) Սուրիկ Գրիգորյան (AM), Սուրիկ Հարությունյան (AM), Սարգիս Գրիգորյան (AM)  
(73) Սուրիկ Գրիգորյան, 0082, Երևան, Ծովակալ Խակոբյի պող. 50, բն. 12 (AM), Սուրիկ Հարությունյան, 0054, Երևան, Դավիթաշեն 3-րդ թաղ. 30, բն. 39 (AM), Սարգիս Գրիգորյան, 3701, Ջերմուկ, Շահումյան 5, բն. 53 (AM)

(54) **Սրտամկանի հյուսվածքների կայունարար**

(57) Գյուղը վերաբերում է բժշկության բնագավառին, մասնավորապես՝ վիրաբուժական գործիքներին և կարող է կիրառվել սրտի վիրահատման ժամանակ այն որոշակի դիրքում սևեռելու համար:

Կայունարարն ունի հենամարմնի վրա տեղակայված երկարացված ճկափող, որի հեռադիր ծայրին տեղակայված են ճկուն ներծծիչներ, իսկ մյուս ծայրին՝ այդ ծայրի ձգման և սևեռման մեխանիզմ: Ճկափողը կազմված է մեկը մյուսին կիպ մոտեցրած հողակապային օղակներից, որոնցից յուրաքանչյուրն ունի առանցքային կոնաձև անցք ունեցող ցանցայի դեր կատարող կտրուկի գնդային տարր և այն ընդգրկող կալակ, որն ունի հարևան հողակապային օղակի գնդային տարրի կոնական անցքի մեջ ներդրված կոնաձև պոչամաս:

Ապահովվում է սևեռման հուսալիությունը 2 նկ.:

(51) (2006) (11) 2148 (13) A2  
A61C 13/08

(21) AM20080021 (22) 27.02.2008  
(42) 04.05.2008

(71) Մարինե Սահակի Պետրոսյան (AM), Արտակ Սահակի Պետրոսյան (AM)  
(72) Մարինե Սահակի Պետրոսյան (AM), Արտակ Սահակի Պետրոսյան (AM)  
(73) Մարինե Սահակի Պետրոսյան, 0078, Երևան, Մազմանյան 12, բն. 13 (AM), Արտակ Սահակի Պետրոսյան, 0031, Երևան, Սպորտի 9 (AM)

**(54) Մետաղախեցեղեն ատամնային կառուցվածքների մետաղական կմախքի ավազաշիթային մշակման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է ատամնաբուժական օրթոպեդիային և կարող է կիրառվել մետաղախեցեղեն ատամնային կառուցվածքների մշակման տեխնոլոգիայում:

Ավազաշիթային մշակումը կատարում են այլումինի օքսիդով թթվածնային շիթի ճնշման տակ, որից հետո մետաղական կմախքը լվանում են հոսող ջրով:

Պարզեցվում է մշակման եղանակը և կրճատվում աշխատանքի տևողությունը:

(51) (2006) (11) 2149 (13) A2  
A61N 5/00

(21) AM20080034 (22) 20.03.2008

(42) 04.05.2008

(71) «Բժշկական սաքանական միջազգային հետախույնական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ (AM)

(72) Սիներիկ Հայրապետյան (AM), Կարեն Հակոբյան (AM)

(73) «Բժշկական սաքանական միջազգային հետախույնական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ, 0040, Երևան, Աճառյան 31 (AM)

**(54) Զարորակ ուռուցքների աճի և զարգացման արգելակման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բժշկությանը, մասնավորապես՝ ուռուցքաբանությանը և կարող է կիրառվել չարորակ ուռուցքների բուժման համար:

Փորձնական կենդանիների վրա ազդում են էլեկտրամագնիսական ալիքներով՝ 439 հաճախությամբ և 1 ժամ ազդեցության տևողությամբ, և կենդանիներին լրացուցիչ տալիս են թորած ջուր:

Նվազեցվում է վնասակար ազդեցությունը օրգանիզմի վրա:

(51) (2006) (11) 2150 (13) A2  
B01J 19/10  
B01F 3/08

(21) AM20070140 (22) 21.12.2007

(42) 01.04.2008

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Բորիս Սերգեյի Բալասանյան (AM), Ստեփան Շմավոնի Խրիստաֆորյան (AM), Արամ Բորիսի Բալասանյան (AM), Մարիամ Գևորգի Հակոբյան (AM), Դավիթ Գալուստի Յուրմուզյան (AM), Չինաիդա Վլադիմիրի Գևորգյան (AM), Ներսես Խաչատուրի Հակոբյան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

**(54) Էմուլսիայի ստացման անդրաձայնային եղանակ**

(57) Էմուլսիայի ստացման համար չափում են դրա բոլոր բաղադրամասերի պայմանական մածուցիկության կախվածությունը ջերմաստիճանից: Այդ կախվածությունների միջոցով որոշում են բոլոր բաղադրամասերի պայմանական մածուցիկության կախվածությունների գրաֆիկական պատկերների առաջին հատման կետը եւ դրան համապատասխանող, Էմուլսիայի առաջացման ջերմաստիճանը: Էմուլսիայի բաղադրամասերը լցնում են անդրաձայնային ռեակտորի մեջ: Դրանք տաքացնում են մինչեւ Էմուլսիայի առաջացման ջերմաստիճանը եւ, պահպանելով այդ ջերմաստիճանը, հեղուկ միջավայրը ենթարկում են անդրաձայնային տատանումների մինչև Էմուլսիայի առաջացմը:

Բարձրացվում է Էմուլսացման գործընթացի ինտենսիվությունը, 1 նկ.:

(51) (2006) (11) 2151 (13) A2  
B08B 3/00

(21) AM20070134 (22) 06.12.2007

(42) 04.05.2008

(71) Արմեն Աթանեսյան (AM), Գագիկ Հարությունյան (AM)

(72) Արմեն Աթանեսյան (AM), Գագիկ Հարությունյան (AM)

(73) Արմեն Աթանեսյան, 0044, Երևան, Ավան 3/2, Դուրյան 45, բն.5 (AM), Գագիկ Հարությունյան, 0012, Երևան, Հր. Զոհարի 25, բն.29 (AM)

**(54) Դետալների լուծիչով մաքրման սարք**

(57) Գյուտը վերաբերում է դետալների մաքրման սարքերին և կարող է կիրառվել թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերի կամ բյուրեղների մաքրման համար:

Սարքն ունի լուծիչի անոթ, մաքրման անոթ, լուծիչը մաքրման անոթ մատուցման և բանաձ լուծիչը լուծիչի անոթ արտոլուման միջոց և սառնարան: Լուծիչի մատուցման և բանաձ լուծիչի արտոլուման միջոցն ունի լուծիչի անոթի վրա տեղակայված միջանկյալ անոթ, որը հաղորդակցվում է մաքրման անոթի և սառնարանի հետ: Միջանկյալ անոթում տեղակայված է սիֆոն, որի վարընթաց ճյուղը տեղադրված է լուծիչի անոթի մեջ: Մաքրման անոթում, հորիզոնական առանցքի շուրջ պտտման հնարավորությամբ, տեղակայված է մաքրվող դետալների համար մետաղյա ցանցավոր տուփ:

Պարզեցվում է սարքի կառուցվածքը, 1 նկ. :

(51) (2006) (11) 2152 (13) A2  
B23D 79/00

(21) AM20070141 (22) 21.12.2007

(42) 03.03.2008

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Բորիս Սերգեյի Բալասանյան (AM), Արամ Բորիսի Բալասանյան (AM), Ստեփան Շմավոնի Խրիստաֆորյան (AM), Ալեքսանդր Վալերիի Ղարայան (AM)

(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Բազմաստիճան սայրային գործիքով կտրման գործընթացի հավասարաչափության բարձրացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես բազմաստիճան սայրային գործիքով կտրման գործընթացի հավասարաչափության բարձրացման եղանակներին: Ընտրված կտրման ռեժիմներով կատարում են դետալի փորձնական կտրում, որի ժամանակ գրանցում են տաշեղի միավոր տարրի ձևագոյացման ընթացքում կտրման ուժի փոփոխման բնույթը և տևողությունը: Որոշում են կտրման գումարային ուժի և դրա փոփոխականության կախվածությունը միաժամանակ աշխատող կտրող սայրերի աստիճանների թվից: Կտրման ուժի փոփոխությունը կերպափոխում են գծային մոդելի, որի միջոցով գտնում են գծային տեղամասերի բանակը, որը հավասար է կտրող սայրի աստիճանների թվին:

Կտրող սայրի սրման առջևի անկյունը որոշում են համապատասխան բանաձևից: Կտրումն իրականացնում են կտրման գումարային ուժի և դրա փոփոխականության նվազագույն արժեքների պայմաններում:

Բարձրացվում է կտրման գործընթացի հավասարաչափությունը, 3 նկ.:

(51) (2006) (11) 2153 (13) A2  
C02F 1/62

(21) AM20080033 (22) 20.03.2008

(42) 04.05.2008

(71) Գարիկ Արամայիսի Կարապետյան (AM), Գրիգորի Բաղդասարի Այվազյան (AM)

(72) Գարիկ Արամայիսի Կարապետյան (AM), Գրիգորի Բաղդասարի Այվազյան (AM), Հայաստան Արմենակի Հակոբյան (AM), Մարիետա Համլետի Ավետիսյան (AM), Լուսինե Հովհաննեսի Մկրտչյան (AM)

(73) Գարիկ Արամայիսի Կարապետյան, 3704, Վայոց Ձորի մարզ, գյուղ Գնդեվազ (AM), Գրիգորի Բաղդասարի Այվազյան, Երևան, Դ. Անհաղթի 18, բն. 32 (AM)

(54) **Արսենիտ իոններից բնական կամ հոսքաշրերի մաքրման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բնական՝ քաղցրահամ կամ հանքային, խմելու ջրերը կամ հոսքաշրեր արսենիտ իոններից ( $AsO_3^{3-}$ ) մաքրման եղանակներին: Ջուրը անցկացնում են ձևափոխված քամող լցվածքի շերտով, որպես լցվածք օգտագործում են 5-15% երկաթի(III) հիդրօքսիդ կամ երկաթի(III), քրոմի(III), տիտանի(IV), ցիրկոնիումի(IV) կամ նիոբիումի(V) օքսիդ պարունակող Ջերմուկի, Չարենցավանի, Անիի կամ Ապարանի հանքավայրերի մանրացրած չեչաքարը:

Բարձրացվում է արսենիտ իոններից ջրի մաքրման աստիճանը:

(51) (2006) (11) 2154 (13) A2  
C02F 1/62

(21) AM20080026 (22) 06.03.2008

(42) 01.04.2008

(71) Գարիկ Արամայիսի Կարապետյան (AM), Գրիգորի Բաղդասարի Այվազյան (AM)

(72) Գարիկ Արամայիսի Կարապետյան (AM), Գրիգորի

Բաղդասարի Այվազյան (AM), Հայաստան Արմենակի Հակոբյան (AM), Մարիետա Համլետի Ավետիսյան (AM), Լուսինե Հովհաննեսի Մկրտչյան (AM)  
(73) Գարիկ Արամայիսի Կարապետյան, 3704, Վայոց Ձորի մարզ, գյուղ Գնդեվազ (AM), Գրիգորի Բաղդասարի Այվազյան, 0069, Երևան, Դ.Անհաղթի 18, բն. 32 (AM)

(54) **Արսենից բնական ջրերի մաքրման եղանակ**  
(57) Գյուտը վերաբերում է բնական ջրերը՝ խմելու կամ հանքային, արսենից մաքրելու եղանակներին:

Ջուրը հաջորդաբար մշակում են կալիումի պերմանգանատի լուծույթով, երկաթի (III) քլորիդի լուծույթով, որից հետո անցկացնում են քամող լցվածքի շերտով: Որպես լցվածք օգտագործում են Ջերմուկի, Չարենցավանի, Անիի կամ Ապարանի հանքավայրերի՝ մասնիկների 0,1-2,0մմ չափ ունեցող մանրացրած չեչաքարը:

Բարձրացվում է արսենից ջրի մաքրման աստիճանը:

(51) (2006) (11) 2155 (13) A2  
C02F 1/64

(21) AM20080016 (22) 15.02.2008  
(42) 01.04.2008

(71) Գարիկ Արամայիսի Կարապետյան (AM), Գրիգորի Բաղդասարի Այվազյան (AM)  
(72) Գարիկ Արամայիսի Կարապետյան (AM), Գրիգորի Բաղդասարի Այվազյան (AM), Հայաստան Արմենակի Հակոբյան (AM), Մարիետա Համլետի Ավետիսյան (AM), Ռուզաննա Թորգոմի Մարկոսյան (AM), Նարինե Ժորայի Մելքոնյան (AM)  
(73) Գարիկ Արամայիսի Կարապետյան, 3704, Վայոց Ձորի մարզ, գյուղ Գնդեվազ (AM), Գրիգորի Բաղդասարի Այվազյան, 0069, Երևան, Դավիթ Անհաղթի 18, բն. 32 (AM)

(54) **Երկաթից և մանգանից բնական ջրերի մաքրման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է բնական ջրերը՝ խմելու կամ հանքային, երկաթից և մանգանից մաքրելու եղանակներին:

Ջուրը անցկացնում են ձևափոխված քամող լցվածքի շերտով, որպես լցվածք օգտագործում են 0,01-0,1% երկաթի (III) հիդրօքսիդ պարունակող Ջերմուկի, Չարենցավանի, Անիի կամ Ապարանի հանքավայրերի մանրացրած չեչաքարը:

Բարձրացվում է ջրի մաքրման աստիճանը:

(51) (2006) (11) 2156 (13) A2  
C05F 3/06

(21) AM20080023 (22) 29.02.2008  
(42) 04.05.2008

(71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Ստյոպա Ենոքի Մարգարյան (AM), Արտյուշա Ջավադի Աղասարյան (AM), Մերուժան Թադևոսի Բաղդասարյան (AM), Սուրեն Էդուարդի Միքայելյան (AM), Արգամ Հրաչիկի Հարությունյան (AM)

(73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)

(54) **Թափոնների վերամշակման տեղակայանք**

(57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը և կարող է կիրառվել գոմաղբի և օրգանական թափոնների վերամշակման գործընթացներում՝ պարարտանյութի ստացումով:

Տեղակայանքն ունի հարկերի բաժանված ջերմամեկուսացված բունկեր, սկզբնական նյութի մատուցման ու պատրաստի կոմպոստի բեռնաթափման միջոցներ և խառնիչներ: Յուրաքանչյուր հարկի հատակն ունի մեկ հարթությունում պտտման հնարավորությամբ տեղակայված զուգահեռ լիսեռներ, որոնց վրա ամրացված են խառնիչների դեր կատարող պտուտակաձև թիակներ, ընդ որում, թիակները լիսեռների վրա դասավորված են այնպես, որպեսզի առաջանա անցքավոր մակերևույթ, որի անցքերի չափերը փոքր են թափոնների չափերից, օրինակ՝ շախմատային կարգով:

Պարզեցվում է կառուցվածքը, բարձրացվում փխրեցման աստիճանը, 4նկ.:

(51) (2006) (11) 2157 (13) A2  
G02F 1/35

(21) AM20080011 (22) 06.02.2008  
(42) 01.04.2008

(71) ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ (AM)

(72) Էդուարդ Վարդանյան (AM), Արմեն Պողոսյան (AM), Իրա Ղամբարյան (AM), Էդուարդ Բարսեղյան (AM), Ստեփան Եսայան (US)

(73) ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ (AM)

(54) **Լիթիումի նիոբատի կամ լիթիումի տանտալատի պարբերականորեն բևեռացված բյուրեղների ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է ոչ գծային օպտիկային, մասնավորապես՝ լիթիումի նիոբատի կամ լիթիումի տանտալատի բյուրեղների մշակման տեխնոլոգիային:

Համընկնելի բաղադրությամբ բյուրեղը նախապես շիկամշակում են լիթիումով հարուստ նյութի գոլորշում՝ 0,2-2 ժամվա ընթացքում 700 - 1090°C ջերմաստիճանում: Շիկամշակված բյուրեղի +Z մակերևույթի վրա վիմագրական եղանակով նստեցնում են մետաղական էլեկտրոդներ, այնուհետև էլեկտրոդներին տալիս են 8 - 12 կՎ/մմ վերաբևեռացման լարում:

Բարելավվում է պարբերականորեն բևեռացված բյուրեղների որակը, պարզեցվում է ստացման տեխնոլոգիան:

(74) Ա. Պետրոսյան

(51) (2006) (11) 2158 (13) A2  
G03B 42/00  
H01J 47/00  
H05G 1/00

(21) AM20080043 (22) 15.04.2008

(42) 04.05.2008

(71) Մարտիրոս Պետրոսի Լորիկյան (AM), Հայկ Մարտիրոսի Լորիկյան (AM)

(72) Մարտիրոս Պետրոսի Լորիկյան (AM), Հայկ Մարտիրոսի Լորիկյան (AM)

(73) Մարտիրոս Պետրոսի Լորիկյան, 0033, Երևան, Համբարձումյան 14, բն. 18 (AM), Հայկ Մարտիրոսի Լորիկյան, 0033, Երևան, Համբարձումյան 14, բն. 18 (AM)

(54) **Ճառագայթային պատկերի էլեկտրոնային կերպավորիչ**

(57) Գյուտը վերաբերում է ռենտգենյան, նեյտրոնային եւ այլ իոնացնող ճառագայթման միջոցով ստացված պատկերի դիտարկման սարքերին եւ կարող է օգտագործվել գիտության, արտադրության եւ բժշկության մեջ՝ արատորոշման, ախտորոշման նպատակներով:

Կերպավորիչն ունի թիթեղավոր սցինտիլյատոր, երկու լուսակաթող եւ վակուումային անոթ: Առաջին լուսակաթողը նստեցված է սցինտիլյատորի մի կողմի մակերևույթին, իսկ երկրորդը՝ սցինտիլյատորի երկրորդ՝ հակադիր մակերևույթին: Լուսակաթողներից յուրաքանչյուրի

դիմաց տեղադրված է կոորդինատային հաշվիչ, որը դիրքավորված է լուսակաթողի հարթությանը զուգահեռ հարթության մեջ:

Բարձրացվում են ճառագայթման քվանտների գրանցման արդյունավետությունը, սարքի տարածական լուծաչափը, դիտարկման մակերեսը, նվազեցվում է սարքի ինքնարժեքը, 1 նկ.:

(51) (2006) (11) 2159 (13) A2  
G09B 23/28

(21) AM20080036 (22) 28.03.2008

(42) 04.05.2008

(71) Կառլեն Օգսենի Հովսևյան (AM)

(72) Կառլեն Օգսենի Հովսևյան (AM)

(73) Կառլեն Օգսենի Հովսևյան, 0010, Երևան, Վարդանանց 20, բն. 1 (AM)

(54) **Բնականոն աղիքային միկրոֆլորայով մկների մոտ «մանրէագերծ բարակ և հաստ աղիքների» մոդելի ստացման եղանակ և դրա կիրառումը վարակային հիվանդությունների ախտաճնության որոշման համար**

(57) Գյուտը վերաբերում է կենսաբանությանը, մասնավորապես՝ բժշկական մոդելների ստացման եղանակներին և կարող է կիրառվել վարակային հիվանդությունների ախտաճնության որոշման համար:

17-20 օրական հղիությամբ C3HA, CBA, C57L/6 կամ BALB/c ինքրեզ գծերի մկների որովայնի խոռոչը ճեղքում-բացում են, սաղմերը դուրս հանում ու տեղադրում Հենքսի միջավայրում: Այնուհետև սաղմերի բարակ և հաստ աղիքները մեկուսացնում են ու կտրատում (0-4)°C ջերմաստիճանում Հենքսի միջավայրում, աղիքների կտորներով միջավայրի 0,2-0,5մլ ներարկում են ենթամաշկային նույն գծի հասուն սինգեն մկներին և 7-10 օր հետո լուսային ու էլեկտրոնային մանրադիտակով դիտարկում ձևավորված «մանրէագերծ բարակ և հաստ աղիքներին» բնորոշ հյուսվածքաբանական կառուցվածքով բշտերը:

Հայտարկվող եղանակով ստացված մոդելը կիրառում են սալմոնելյոզի ախտաճնության որոշման համար:

Ապահովվում է «մանրէագերծ բարակ և հաստ աղիքների» մոդելի ստացումը, 2 անկախ կետ, 4 նկ.:

(51) (2006) (11) 2160 (13) A2  
H01L 31/02

(21) AM20080008 (22) 31.01.2008  
(42) 01.04.2008

(71) Սուրեն Մարտիրոսյան (AM), Գոհար Հովսեփյան (AM), Հասմիկ Զոհարյան (AM), Սոնա Բաբուջյան (AM)  
(72) Սուրեն Մարտիրոսյան (AM), Գոհար Հովսեփյան (AM), Հասմիկ Զոհարյան (AM), Սոնա Բաբուջյան (AM)  
(73) Սուրեն Մարտիրոսյան, 0001, Երևան, Խանջյան 31, բն.37 (AM), Գոհար Հովսեփյան, 0078, Երևան, Մարգարյան 22, բն.16 (AM), Հասմիկ Զոհարյան, 0014, Երևան, Մամիկոնյանց 15, բն.26 (AM), Սոնա Բաբուջյան, 0078, Երևան, Ֆուչիկի 25, բն. 8 (AM)

**(54) Բիսար քալոգենիդային կիսահաղորդչային թաղանթների ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է կիսահաղորդչային սարքերին, կարող է կիրառվել էլեկտրահաղորդչային տեխնիկայում, մասնավորապես՝ ֆոտոէլեկտրաքիմիական կերպափոխիչների բնագավառում, լուսային էներգիայի անմիջական կերպափոխման համար: Թաղանթը ստանալու համար անշարժ էլեկտրահաղորդիչ տակդիրի վրա սկզբում էլեկտրաքիմիական եղանակով ձևավորում են ծակոտկեն մակերևույթ, որից հետո այդ մակերևույթի վրա ստանում են կիսահաղորդչային թաղանթ:

Բարելավվում են թաղանթների բնութագրերը՝ օգտակար գործողության գործակիցը, լցման գործակիցը, կայունությունը:

(51) (2006) (11) 2161 (13) A2  
H02M 3/02

(21) AM20080015 (22) 13.02.2008  
(42) 01.04.2008

(71) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)  
(72) Նորիկ Նահապետի Պետրոսյան (AM), Պարզև Սուրենի Մանուկյան (AM)  
(73) «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

**(54) Հաստատուն հոսանքի իմպուլսային կերպափոխիչ**

(57) Հաստատուն հոսանքի իմպուլսային կերպափոխիչն ունի միաֆազ թիրիստորային կամրջակ, որի փոփոխական հոսանքի անկյունագծում միացված են կոնդենսատոր և դրոսել, որոնք միացված են սնման աղբյուրին և բեռնվածքի շղթային հաջորդաբար, երկու վեցի, որոնցից մեկը հակառակ ուղղությամբ միացված է բեռնվածքին և դրան հաջորդաբար միացված դրոսելի շղթային զուգահեռ, իսկ երկրորդը՝ հակառակ ուղղությամբ զուգահեռ թիրիստորային կամրջակի և դրոսելի հաջորդական շղթային:

Կերպափոխիչն ունի նաև զուգահեռ միացված շղթայով լրացուցիչ կոմուտացիոն կոնդենսատոր և բաղկացած է զուգահեռ հակառակ միացված երկու թիրիստորներից և դրանց հաջորդաբար միացված կոնդենսատորից:

Բարձրացվում է ելքային բնութագրերի կայունությունը, լնկ.:

ՕԳՏԱԿԱՐ  
ՄՈԴԵԼՆԵՐ

**Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական  
տվյալների նույնականացման միջազգային  
կոդերը ըստ ՄՍՅԿ ST.9 ստանդարտի**

|    |                                                                                         |
|----|-----------------------------------------------------------------------------------------|
| 11 | արտոնագրի համարը                                                                        |
| 13 | փաստաթղթի տեսակի կոդը<br>Ս օգտակար մոդելի արտոնագիր                                     |
| 21 | հայտի համարը                                                                            |
| 22 | հայտի ներկայացման թվականը                                                               |
| 23 | լրացուցիչ նյութերի ստացման թվականով որոշված առաջնություն                                |
| 31 | առաջին հայտի համարը                                                                     |
| 32 | առաջին հայտի ներկայացման թվականը                                                        |
| 33 | երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը                                            |
| 45 | օգտակար մոդելի արտոնագրի մասին տեղեկությունների<br>հրապարակման թվականը                  |
| 51 | միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)                                 |
| 54 | օգտակար մոդելի անվանումը                                                                |
| 56 | տեղեկատվության աղբյուրներ                                                               |
| 57 | ռեֆերատը                                                                                |
| 62 | ավելի վաղ ներկայացված հայտի համարը եւ ներկայացման թվականը,<br>որից զատված է տվյալ հայտը |
| 71 | հայտատուն, երկրի կոդը                                                                   |
| 72 | օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը                                              |
| 73 | արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը                                                       |
| 74 | արտոնագրային հավատարմատար                                                               |
| 85 | միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը                                   |
| 86 | միջազգային հայտի (PCT) համարը եւ ներկայացման թվականը                                    |
| 87 | միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը եւ թվականը                                    |

## Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2006) (11) 149 (13) Ս

**B01D 9/02**

(21) AM20080092U (22) 18.06.2008

(71) Նիկոլայ Գրիգորյան (AM)

(72) Նիկոլայ Գրիգորյան (AM)

(73) Նիկոլայ Գրիգորյան, 0018, Երևան, Տիգրան Մեծի պող. 27/2, բն. 7 (AM)

(54) **Բյուրեղարար**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է քիմիական արդյունաբերությանը, մասնավորապես՝ աշտարակաձեւ բյուրեղարարներին եւ կարող է կիրառվել

աղային լուծույթներից աղ ստանալու համար: Օգտակար մոդելն ունի հորանային աշտարակ, փոշեցրման ծայրափողակներ, որոնք տեղադրված են հորանավոր աշտարակի ներքին մակերևույթի պարագծով և ապահովում են կաթիլների մատուցումը դեպի հորանի կենտրոնական տարածք: Հորանավոր աշտարակի վերին մասում տեղակայված է կաթիլորսիչ:

Բարձրացվում է բյուրեղարարի արդյունավետությունը, 1 նկ.:

**ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ**

**ТОВАРНЫЕ ЗНАКИ**

**Ապրանքային եւ սպասարկման նշաններին վերաբերող  
մատենագիտական տվյալների նույնականացման  
միջազգային կոդերը ըստ ՄՍՅԿ ST.60 ստանդարտի**

|     |                                                                                                            |
|-----|------------------------------------------------------------------------------------------------------------|
| 600 | նախկին ԽՍՀՄ վկայականի համարը եւ հայտի ներկայացման թվականը                                                  |
| 111 | գրանցման հերթական համարը                                                                                   |
| 151 | գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)                                                              |
| 152 | թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է                                                                      |
| 181 | գրանցման գործողության ենթադրյալ ավարտը                                                                     |
| 210 | հայտի համարը                                                                                               |
| 220 | հայտի ներկայացման թվականը                                                                                  |
| 230 | ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը                                                                |
| 310 | առաջին հայտի համարը                                                                                        |
| 320 | կոնվենցիայով առաջնության թվականը                                                                           |
| 330 | երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը                                                               |
| 510 | ապրանքների եւ (կամ) ծառայությունների ցանկը                                                                 |
| 511 | դասերը ըստ նշանների գրանցման ապրանքների եւ ծառայությունների<br>միջազգային դասակարգման (Նիցայի դասակարգում) |
| 526 | չպահպանվող տարրեր                                                                                          |
| 540 | ապրանքային նշանը                                                                                           |
| 551 | կոլեկտիվ նշան                                                                                              |
| 554 | ծավալային նշան                                                                                             |
| 591 | գույնը եւ գունային համակցությունը                                                                          |
| 646 | իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը եւ թվականը                                                   |
| 730 | նշանի սեփականատերը, հասցեն, երկրի կոդը                                                                     |
| 740 | արտոնագրային հավատարմատար                                                                                  |

## Տեղեկություններ գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների մասին

(210) 20070355

(111) 13237

(220) 29.03.2007

**(151) 17.09.2008**

(181) 29.03.2017

(730) Մենփաուեր Ինք., Վիսկոնսին նահանգի  
կորպորացիա, ՄՏ

(540)



(591) Նշանը պահպանվում է կապույտ, երկնագույն, կանաչ, կարմիր եւ նարնջագույն գույնի ի համակցությամբ:

(511) (510)

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ. մասնավորապես՝ ժամանակավոր անձնակազմի ծառայություններ. ժամանակավոր անձնակազմի տեղավորում. մշտական անձնակազմի տեղավորում. անձնակազմի համալրում. վարձակալման բյուրոյի ծառայություններ. վարձակալման նպատակով հոգեբանական տեստերի անցկացում՝ նրանց համապատասխանեցումը որոշելու համար. անհատների տեստավորում՝ աշխատանքային հմտությունները որոշելու համար. աշխատանքի ընդունելիս թեկնածուների գնահատման եւ ընտրության ծառայությունների ապահովում. ցուցադրման եւ վաճառքի զարգացման ծառայություններ. առեւտրային կազմակերպությունների վարչարարական կառավարում. գործարարության ասպարեզում տեղեկատվական եւ խորհրդատվական ծառայություններ, որոնք վերաբերում են ժամանակավոր եւ պայմանագրային անձնակազմի ձեռքբերմանը. անձնակազմի կառավարման եւ ընտրության խորհրդատվական ծառայություններ. խորհրդատվական ծառայություններ գործարարության ասպարեզում, մասնավորապես՝ կարիերայի կառավարման, պաշտոնի տեղավորման, պաշտոնների համա-

լրման ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ զբաղվածության ասպարեզում, աշխատանքից ազատվածներին աշխատանքի տեղավորելու ծառայություններ, աշխատուժի վերաբերյալ խորհրդատվական ծառայություններ, անձնակազմի կառավարման խորհրդատվական ծառայություններ, խորհրդատվական ծառայություններ անձնակազմի պահպանման եւ կարիերայի կառավարման ասպարեզում. ռեզյումեներ կազմելու ծառայություններ. ռեզյումեների համապատասխանեցման ծառայություններ. օուդիտ եւ հարկային հայտարարագրեր կազմելու ծառայություններ. գործարարական գործընթացի արտաքին ընկերությունների հետ ենթապայմանագրերի կնքման ծառայություններ. ժամանակավոր մասնագիտացված անձնակազմի ծառայություններ. ժամանակավոր մասնագիտացված անձնակազմի տեղավորում. մասնագիտացված անձնակազմի համալրում. մասնագիտացված անձնակազմի տեղավորման համար վարձելու բյուրոներ. տեստավորում Նախատեսված աշխատողների եւ ժամանակավոր անձնակազմի արտադրական հմտությունների, արագաշարժության եւ ձեռք-աչք կորոդինացիայի որոշման համար. անձնակազմի ամեն տեսակի տեստավորում:

(740) Ա. Գալոյան

(210) 20071172

(111) 13238

(220) 17.10.2007

(151) 17.09.2008

(181) 17.10.2017

(730) “Շուշան” Արտադրական կոոպերատիվ,  
Գավառ, Բոշնաղյան 26, 2-րդ նրբ., AM

(540)



(526) Բոլոր գրառումներն ինքնուրույն պահպանության օբյեկտներ չեն:

(591) Նշանը պահպանվում է մուգ եւ բաց կապույտ, կարմիր, սպիտակ, երկնագույն եւ սեւ գունային համակցությամբ:

(511) (510)  
դաս 32. խմելու ջուր:

(210) **20071396** (111) **13239**  
(220) **17.12.2007** (151) **17.09.2008**  
(181) **17.12.2017**

(730) “Մեդիսար” ՍՊԸ, Երեւան, Արշակունյաց 6, AM  
(540)



(526) Ատոմային ուղեծրի պատկերն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(591) Նշանը պահպանվում է մոխրագույն, մանուշակագույն եւ սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)  
դաս 35. քիմիական ռեակտիվների, միկրոբիոլոգիական միջավայրերի՝ սննդային նյութերի (ագար-ագար, պեպտոն), լաբորատոր սարքավորումների, ապակեղենի եւ կահույքի վաճառք:

(210) **20080067** (111) **13240**  
(220) **31.01.2008** (151) **17.09.2008**  
(181) **31.01.2018**

(730) “Բարսիս” ՍՊԸ, Երեւան, Արշակունյաց 57/2, AM  
(540)



(511) (510)  
դաս 11. լուսավորման, ջեռուցման, ջրաբաշխման եւ սանիտարատեխնիկական սարքեր:

դաս 19. ոչ մետաղյա շինանյութեր. ոչ մետաղյա կոշտ խողովակներ շինարարական նպատակների համար:

դաս 37. շինարարություն. սարքավորումների տեղակայում:

(210) **20080088** (111) **13241**  
(220) **06.02.2008** (151) **17.09.2008**  
(181) **06.02.2018**

(730) “Շառոյան-Սարյան” ՍՊԸ, Երեւան, Մաշտոցի 2/12, AM

(540)



(591) Նշանը պահպանվում է մուգ եւ բաց փիրուզագույն, երկնագույն, կարմիր, ոսկեգույն եւ սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)  
դաս 29. պահածոներ. ձիթապտուղ, ձեթ.  
դաս 30. ընդեղեն, համեմունքներ, հալվաներ, սուրճ, ժելե, քաղցրավենիք, կրեմներ, թեյեր, դրամներ, կակաո, սոուսներ, խուրմա, կարամել, դոշաք, կոզինախ, կետչուպ, ոսպ. բլիդուր.բան-ջարեղեն.

դաս 31. ոսպ.

դաս 35. առեւտուր:

(210) **20080101** (111) **13242**  
(220) **08.02.2008** (151) **17.09.2008**  
(181) **08.02.2018**

(730) Պեպսիկո, Ինք., Զյուսիսային Կարոլինայի Նահանգ, US

(540)



(591) Նշանը պահպանվում է դեղին, նարնջագույն, կարմիր, ոսկեգույն եւ սպիտակ գունային համակցությամբ:

(511) (510)  
դաս 29. միս, ձուկ, թռչնամիս եւ որսամիս.

մսի էքստրակտներ. պահածոյացված, սառեցված, չորացված եւ ջերմամշակման ենթարկված մրգեր եւ բանջարեղեն. դոնդող, մուրաբա, կոմպոտ. ձու, կաթ եւ կաթնամթերք. սննդային յուղեր եւ ճարպեր.

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ. ալյուր եւ հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն եւ քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց:

(740) ԱԼ. Նահապետյան

(210) **20080102** (111) **13243**  
(220) **08.02.2008** (151) **17.09.2008**  
(181) **08.02.2018**

(730) Պեպսիկո, Ինք., Չյուսիսային Կարոլինայի  
Նահանգ, US

(540)



(591) Նշանը պահպանվում է դեղին, կարմիր, նարնջագույն, ոսկեգույն եւ սպիտակ գույնային համակցությամբ:

(511) (510)

դաս 29. միս, ձուկ, թռչնամիս եւ որսամիս. մսի էքստրակտներ. պահածոյացված, սառեցված, չորացված եւ ջերմամշակման ենթարկված մրգեր եւ բանջարեղեն. դոնդող, մուրաբա, կոմպոտ. ձու, կաթ եւ կաթնամթերք. սննդային յուղեր եւ ճարպեր.

դաս 30. սուրճ, թեյ, կակաո, շաքար, բրինձ, տապիոկա, սագո, սուրճի փոխարինիչներ. ալյուր եւ հացահատիկային մթերքներ, հաց, հրուշակեղեն եւ քաղցրավենիք, պաղպաղակ. մեղր, մաթ. խմորիչներ, հացաթխման փոշիներ. աղ, մանանեխ. քացախ, սոուսներ (համեմունք). համեմունք. սառույց:

(740) ԱԼ. Նահապետյան

(210) **20080104** (111) **13244**  
(220) **08.02.2008** (151) **17.09.2008**  
(181) **08.02.2018**

(730) “Բիո ֆուդ” ՍՊԸ, Երեւան, Անդրանիկի 43,  
բն. 51, AM

(540)

# ButterFLY

(511) (510)

դաս 29. կարագ:

(210) **20080105** (111) **13245**  
(220) **08.02.2008** (151) **17.09.2008**  
(181) **08.02.2018**

(730) “Բիո ֆուդ” ՍՊԸ, Երեւան, Անդրանիկի 43,  
բն. 51, AM

(540)

# TastyBOOM

(511) (510)

դաս 30. հրուշակեղեն:

(210) 20080106 (111) 13246  
(220) 08.02.2008 (151) 17.09.2008  
(181) 08.02.2018

(730) “Բիո ֆուդ” ՍՊԸ, Երեւան, Անդրանիկի 43,  
բն. 51, AM

(540)

# Jammy

(511) (510)

դաս 30. հրուշակեղեն:

(210) **20080109** (111) **13247**  
(220) **08.02.2008** (151) **17.09.2008**  
(181) **08.02.2018**

(730) “Բիո ֆուդ” ՍՊԸ, Երեւան, Անդրանիկի 43,  
բն. 51, AM

(540)

# Unona

(511) (510)

դաս 30. հրուշակեղեն:

(210) **20080134** (111) **13248**  
(220) **20.02.2008** (151) **17.09.2008**  
(181) **20.02.2018**

(730) “Գրանդ տորակո” հայ-կանադական ՖԶ ՍՊԸ,  
Երեւան, Շահամիրյանների 22, AM  
(540)



(591) Նշանը պահպանվում է մուգ կապույտ, մոխրագույն եւ բաց մոխրագույն գունային համակցությամբ:

(511) (510)  
դաս 34. ծխախոտ, ծխելու պիտույքներ, լուցկի:

(210) **20080277** (111) **13249**  
(220) **26.03.2008** (151) **17.09.2008**  
(181) **26.03.2018**

(730) “Ակտիտուր” ՍՊԸ, Երեւան, Սարյան 40, բն. 36, AM  
(540)



(526) “OUTSOURCINGAGENCY” արտահայտությունն ինքնուրույն պահպանության օբյեկտ է:

(511) (510)  
դաս 39. տրանսպորտ (փոխադրումներ). ապրանքների փաթեթավորում եւ պահպանում. ճանապարհորդությունների կազմակերպում.

դաս 41. դաստիարակություն (կրթություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ. մարզական եւ մշակութային միջոցառումների կազմակերպում:

(210) **20070447** (111) **13250**  
(220) **25.04.2007** (151) **19.09.2008**  
(181) **25.04.2017**

(730) Սլոբոդյան Ալեքսանդր, UA  
(540)



(511) (510)  
դաս 32. ոչ ալկոհոլային ըմպելիքներ:  
(740) Ռ. Մանասերյան

(210) **20071233** (111) **13251**  
(220) **02.11.2007** (151) **19.09.2008**  
(181) **02.11.2017**

(730) “Երեւան պլաստ” ՓԲԸ, ՀՀ Տավուշի մարզ, գ. Թովուզ, AM  
(540)

**ՎԻՇԱՊԱՔԱՐ**  
**ВИШАПАКАР**  
**VISHAPAKAR**

(511) (510)  
դաս 1. քիմիական նյութեր, որոնք նախատեսված են օգտագործելու արդյունաբերական եւ գիտական նպատակներով, լուսանկարչության, գյուղատնտեսության, այգեգործության եւ անտառաբուծության մեջ. չմշակված սինթետիկ խեժեր, չմշակված պլաստմասսաներ. պարարտանյութեր. կրակմարող բաղադրություններ. քիմիական նյութեր մետաղների զոդման եւ միմյան համար. քիմիական նյութեր սննդամթերքի պահածոյացման համար. դաբաղիչ նյութեր. սոսնձող նյութեր արդյունաբերական նպատակներով օգտագործելու համար.

դաս 2. ներկեր, արծնուկներ, լաբեր. մետաղը ժանգոտումից եւ փայտանյութը քայքայումից պաշտպանող նյութեր. ներկանյութեր. խածանյութեր, ներկանյութերի սեւեռակայիչներ. չմշակ-

ված բնական խեղճեր. թերթավոր եւ փոշենման մետաղներ՝ գեղարվեստական, գեղազարդման նպատակների եւ գեղարվեստական տպագրության համար.

դաս 3. սպիտակեցնող պատրաստուկներ եւ այլ նյութեր լվացքի համար. պատրաստուկներ մաքրման, ողորկման (փայլեցման), ճարպագերծման եւ հղկամշակման համար. օճառներ. օճանելիք, եթերային յուղեր, կոսմետիկական միջոցներ, լոսյոններ մազերի համար. ատամի փոշիներ եւ մածուկներ.

դաս 4. տեխնիկական յուղեր եւ (թանձր) բուրբներ. բսալոսթեր. փոշու կլանման, թրջման եւ կապակցման բաղադրություններ. վառելիք (ներառյալ շարժիչային բենզինը) եւ նյութեր լուսավորման նպատակների համար. մոմեր, պատույզներ լուսավորման համար.

դաս 5. դեղագործական եւ անասնաբուժական պատրաստուկներ. հիգիենիկ պատրաստուկներ բուժական նպատակների համար. դիետիկ նյութեր բուժական նպատակների համար, մանկական սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր. ատամալցման եւ ատամների ծեփապատճեններ պատրաստելու նյութեր. ախտահանիչ միջոցներ. փասսատու կենդանիների ոչնչացման պատրաստուկներ. ֆունգիցիդներ, հերբիցիդներ.

դաս 6. սովորական մետաղներ եւ դրանց համա-հալվածքներ. մետաղյա շինանյութեր. շարժական մետաղյա կառուցվածքներ եւ շինություններ. մետաղյա նյութեր ռելիեֆների համար. մետաղյա ճոպաններ եւ լարեր. մետաղակապեր եւ փական-բային իրեր. մետաղյա խողովակներ. անկիզելի պահարաններ. սովորական մետաղներից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. հանքանյութեր.

դաս 7. մեքենաներ եւ հաստոցներ. շարժիչներ (բացառությամբ վերգետնյա տրանսպորտային միջոցների համար նախատեսվածների). կցորդիչներ, միացքներ, կցիչներ եւ փոխանցման տարրեր (բացառությամբ վերգետնյա տրանսպորտային միջոցների համար նախատեսվածների). գյուղատնտեսական գործիքներ, բացառությամբ ձեռքով կառավարվողների. ինկուբատորներ.

դաս 8. ձեռքի գործիքներ. դանակավոր իրեր. պատառաքաղներ եւ գդալներ. սառը գենք. ածելիներ.

դաս 9. գիտական, ծովային, երկրաբաշխական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական,

